

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆՈ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

բ. գ. դ., պրոֆեսոր,

ՀՀ ԳԱՎ Մ. Արեդյանի անվան գրականության ինստիտուտ,
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան,
vano.exiazaryan@mail.ru,

DOI: 10.54503/1829-0116-2022.2-52

ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴԻՆ ԵՎ ՆՐԱ ԱՂՎԱՆ ԼԻՆԵԼԸ ՀԵՐԹՈՂ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ*

Բանալի բառեր- Դավիթ Ալավկա որդի, Դավիթ Գանձակեցի, հայ մատենագիրների վկայություններ, աղբյուրաբանական կեղծիք:

Սույն հոդվածի **խնդրո առարկան** Դավիթ Ալավկա որդու ազգության շուրջ աղբյուրաբանական գիտության մեջ ձևավորված անհիմն տեսության հերքումն է: Հոդվածի **նպատակն** է փաստերի հիման վրա գիտականորեն հիմնավորել Դավիթ Ալավկա որդու աղվան լինելու տեսության սևանկությունը, ինչով պայմանավորված է հոդվածի **արդիականությունը**: Մեր **խնդիրն** է գիտականորեն գնահատել ինչպես աղբյուրաբանական գիտության ներկայացրածը, այնպես էլ հայագիտության փաստարկները: Հոդվածում կիրառել ենք **պատմական, արժեքական (աքսիոլոգիական), մեկնաբանական (հերմենևտիկա)** մեթոդները: **Գիտական նորույթը** Դավիթ Ալավկա որդու մասին նոր համակարգված փաստերով հայագիտության արդարացիությունը հիմնավորելն է:

* Ընդունվել է տպագրության 11.11.2022 թ:

VANO EGHIAZARYAN

*Doctor of Philology,
Professor, RA NAS Institute of Literature,
Vanadzor State University*

DAVID-SON OF ALAVIK AND ARGUMENTS REFUTING HIS BEING AGHVAN IN ARMENOLOGY

Keywords: David-son of Alavik, Davit Gandzaketsi(David of Gandzak), evidence of the Armenian bibliographers, Azerbaijanian falsification.

The **subject** matter of the present article is the refutation of the groundless theory formed in Azerbaijanian science related to the nationality of David - son of Alavik.

The main **purpose** of this article is to refute the Azerbaijanian unsubstantiated theory on the Aghvanian origin of David (based on reliable sources). The **actuality** of this research is conditioned by the presented facts. Our **main task** is to explain scientifically both Azerbaijanian presentation of the subject matter and sound arguments fixed in Armenology(Armenian Studies). In the paper we've used not only **historical, but also axiological and hermeneutic** methods of research. The **scientific novelty** of our investigation is to give reasons for the origin of David-son of Alavik based on new systematic facts and arguments in Armenology

ВАНО ЕГИАЗАРЯН

*д. ф. н., профессор,
НАН РА Институт литературы,
Ванадзорский государственный университет*

ДАВИД СЫН АЛАВИКА И ФАКТЫ В АРМОНОВЕДЕНИИ, ОПОВЕРГАЮЩИЕ ЕГО АЛБАНСКОЕ ПРОИСХОЖДЕНИЕ

Ключевые слова: Давид, сын Алавки, Давид Гандзакеци, свидетельства армянских летописцев, азербайджанская фальсификация.

Предметом данной статьи является опровержение сформировавшейся в азербайджанской науке безосновательной теории о национальности сына Давида, сына Алавки. **Цель** статьи – научно обосновать несостоятельность

теории об албанском происхождении Давида, сына Алавки – этим определяется и **актуальность** данного исследования. Наша **задача** – дать научную оценку как изложениям азербайджанской науки, так и представить аргументацию арменоведов. В статье использованы **исторический, ценностный (аксиологический), интерпретативный (герменевтический)** методы. **Научная новизна** состоит в обосновании истинности арменоведческой точки зрения, которая подкреплена новыми систематизированными фактами о Давиде, сыне Алавки.

Հայագիտության մեջ Դավիթ Ալավկա որդուն (Դավիթ Գանձակեցի) անդրադարձել են Մ. Չամչանցը (Չամչեանց, 1984, էջ 41), Ս. Սոմալյանը (Somalian, 1829, էջ 90), Կ. Նոյմանը (Neumann, 1836, էջ 162-163), Գ. Չարքիանայանը (Չարքիանալեան, 1897, էջ 662), Ե. Դուրյանը (Դուրեան, 1885, էջ 60), Բ. Սարգիսյանը (Սարգիսեան, 1895, էջ 197-200), Հ. Տաշյանը (Տաշեան, 1895, էջ 656), Ղ. Ալիշանը (Ալիշան, 1910, էջ 395, 404, 414, 434), Կ. Կոստանյանցը (Կոստանեանց, 1906, էջ 105-132, 1907, էջ 62-67), Ս. Աբեդյանը (Աբեդյան, 1970, էջ 83-85), Հ. Աճառյանը (Աճառյան, 1944, էջ 37-38), Խ. Սամուելյանը (Սամուելյան, 1939, էջ 74-75, էջ 153), Ա. Աբրահամյանը (Աբրահամյան, 1952, էջ 48-57), Զ. Դաուսեթը (Dowsett, 1961, տ. 1, էջ 1-9, տ. 2, էջ 1-16), Աս. Մնացականյանը (Մնացականյան, 1966, էջ 230, 245), Ա. Թովմասյանը (Թովմասյան, 1962, էջ 117-125), Ն. Պողարյանը (Պողարեան, 1971, էջ 215-217), Ա. Սուքիասյանը (Սուքիասյան, 1978, էջ 227-228), Կ. Քիպարյանը (Քիպարեան, 1992, էջ 428-429), Պ. Խաչատրյանը (Խաչատրեան, 2016, էջ 130), Գ. Սաֆարյանը (Սաֆարյան, 1988, թիվ 4, էջ 113-122, Սաֆարյան Գ., 2006, էջ 5-18), Ռ. Ավագյանը (Ավագյան, 2001, էջ 179-185, Ավագյան, 2000, 90-95), Ս. Ավագյանը (Ավագյան Ս., 2005, 236 էջ), Պ. Հովհաննիսյանը (Հովհաննիսյան, 2012, էջ 675-677) և այլն:

ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴՈՒ ՄԱՍԻՆ

Դավիթ Ալավկա Որդու մասին վկայություններ են թողել հայ միջնադարյան մատենագիրներ Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Ստեփանոս Օրբելյանը, Մխիթար Այրիվանեցին, Սամվել Անեցին, Ազաբիա վարդապետ Սասնեցին:

Ժամանակակից հիշատակագիրը հավաստում է. «Եր եւ յարեւելս Սարկաւազ վարդապետն՝ Հաղբատացին եւ անուանին Դավիթ որդին

Այսպիսի ել ալք բազումը աշակերտը եւ ընկերակիցը սորա» (Յովսէփեան, 1951, ս. 307):

Ըստ Սամվէլ Անեցու (1100-1190) ժամանակագրության՝ Դավիթ Ալավկա որդին մահացել է 1131 թվին. «Ննջեաց յայսմ ամի լուսաւորիչ սուրբ վարդապետն Դավիթ Ալավկայ որդի» (Սամուէլ Անեցի, 2014, էջ 210), թեւ այս հաղորդմամբ հանդերձ նրա մահվան թվականի շուրջ եղել են տարաձայնություններ:

Կիրակոս Գանձակեցին, (1201-1271) իր հայրենակից անվանելով Դավիթ Ալավկա որդուն, նրա մահը համարում է 1130 թիվը. «Մի տարի հետո վախճանվեց Ալավկա որդի սուրբ լուսավորիչ Դավիթ վարդապետը, որ Գանձակ քաղաքի բնակիչ Արքայություն անունով մի քահանայի խնդրանքով գրեց գեղեցիկ շարադրված ու օգտակար Կանոնական օրենսդրությունը» (Կիրակոս Գանձակեցի, 1982, էջ 90): Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Դավիթ Ալավկա որդու և Թոքակերի որդի Գրիգորի խնդրանքով Գրիգորիս հայրապետը Աղվանից կաթողիկոս է ձեռնադրել Քազիկին (Կիրակոս Գանձակեցի, 1982, էջ 146):

Դավիթ Ալավկա որդու մասին գովեստով խոսել է Վարդան Արևելցին (1198-1271)՝ նրան համարելով «լծակից Հովհաննես Իմաստասերի»։ «Եւ զկնի ամի միոյ լծակիցն իւր Ալավկայ որդին Դավիթ, որ կանոնք գրեաց դիւրահաս» (Վարդան Արևելցի, 1862, էջ 121):

Մխիթար Այրիվանեցին (1230-1297) ևս հիշատակել է նրա անունը. «Մեռաւ Սարկաւագ վարդապետն և Գեորգ վարդապետն Մեղրիկ, որ Դրագարկին կարգն սահմանեաց, և Դավիթ վարդապետն Ալավկայ որդին, որ զԿանոնքն բացայայտեաց» (Մխիթար Այրիվանեցի, 1867, էջ 77):

Հայոց ազնվականական տանից սերված պատմիչ Ստեփանոս Օրբելյանը (1250-1305) իր ժամանակագրության մեջ Դավթի մահը համարում է հայոց ՇՁ (1130) թվականին, ինչպես Կիրակոս Գանձակեցին. «Ննջեաց յայսմ ամի լուսաւորիչն, սուրբ վարդապետն Դավիթ Ալավկա որդին» (Ստեփաննոս Օրբելյան, 1942, էջ 17):

Պատմիչների վկայությամբ Դավիթը Հովհաննես Սարկավագի ժամանակակիցն է ու լծակիցը՝ անվանվելով «լուսաւորիչ սուրբ վարդապետն» (Սամվէլ Անեցի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփաննոս Օրբելյան), «կանոնատառն սուրբ վարդապետն» (Ազարիա Սասնեցի), որ հեղինակել է «ոյուրահաս» կանոններ:

Կիրակոս Գանձակեցուն, Մխիթար Գոշին, Վարդան Արևելցուն յու-

րացնելու փորձ արած աղբբեջանցի գիտնականները պարզապես լուռ են հայ պատմիչներ Ստեփանոս Օրբելյանի, Սամվել Անեցու, Մխիթար Այրիվանեցու վկայակոչման մասին, որոնք ևս հիշատակել են Դավիթ Ալավկա որդուն:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴՈՒ ՄԱՍԻՆ

Դավիթ Ալավկա Որդուն մասին առաջին տպագիր անդրադարձը Մ. Չամչյանի «Հայոց պատմության» մեջ է, ըստ որի՝ Դավթի կանոնները գրված են «խառնիխուռն ոճով և անիմաստ բանիւք», քանի որ ընդօրինակող գրիչներն այն աղճատել են (Չամչեան, 1984, էջ 41):

Մ. Չամչյանցի ազդեցությամբ նույն անբարենպաստ կարծիքը կրկնել են Ս. Սոմայանը և Կ. Նոյմանը: Հ. Տաշյանը այդ կանոնների մեծ մասը համարել է «խենթական բաներ» (Տաշեան, 1895, էջ 656):

Գ. Չարբեհանայանը նրան հիշատակում է ԺԲ դարում՝ Դավթ Գանձակեցի անվամբ. «Դավթ Գանձակեցի վարդապետ Ալավկայ որդի: Սա Արքայութիւն կոչուած Նորընծայ քահանայի մը խնդրանօք՝ կանոնական սահմանադրութիւններ գրեց, որոնց համար Կիրակոս կ'ըսէ թէ գեղեցկայարմար ու պիտանացու երկասիրութիւնք ըլլան, ու Վարդան, թէ դիւրահաս կանոններ էին» (Չարբեհանալեան, 1897, էջ 662):

Ամփոփելով կանոնների մասին ուսումնասիրողների պատկերացումները՝ Գ. Սաֆարյանը գրում է. «Գիտնականներից ոմանք՝ Մ. Չամչյանը, Նոյմանը, Չարբեհանայանը, Տաշյանը գտնում են, որ Դավթի կանոնները ըստ էության առանձին արժեք չեն ներկայացնում և, Չամչյանի արտահայտությամբ, «խառնիխուռն և անիմաստ բաներ են»» (Սաֆարյան, 1988, էջ 114):

Մ. Չամչյանցից սկզբնավորված թյուր պատկերացումը և վերոհիշյալ հեղինակների կարծիքները ջանացել են ցրել անվանի հայագետներ Կ. Կոստանյանցը, Ղ. Ալիշանը, Մ. Աբեղյանը, իրավաբաններ Խ. Սամուելյանը, Ա. Սուքիասյանը, Ա. Թովմասյանը, Խ. Թորոսյանը:

Կ. Կոստանյանցը գրում է. «Գանձակեցի Դավթ վարդապետն, ընդհակառակը, կարծես, պարտք է համարում զարգացնել իւր աշակերտի դիտողական աչքը. նա ներկայացնում է կեանքն, ինչպես կայ, ինչպես ինքը տեսնում է այդ, և իւր կանոնները դնում է իւր աշակերտին ըմբռնելի երևոյթների դէմ: Այդ դիտողական նկարագիրն է, որ բարձրացնում է կանոնական օրինադրութիւնների արժեքը» (Կոստանեանց, 1907, էջ 67):

Մ. Աբեղյանը արժևորում է նրա կանոնները. «Դավթի գործը, որ բաղկացած է 98 կանոններից, ունի ոչ թե գրական արժեք, այլ կուլտուր-պատմական» (Աբեղյան, 1970, էջ 83): Մ. Աբեղյանն իրավացի է համարել Խ. Սամվելյանին, որը Դավթի կանոնները դնում է հայկական դատաստանագրքերի շարքի մեջ (Աբեղյան, 1970, էջ 85): Մ. Աբեղյանը Դավթի կանոնների աշխարհիկ ոգին կապում է հայկական վերածնության՝ Նոր մտավոր հոսանքի հետ. «Իսկապես որ այդ երկն իր տեսակով մի Նոր բան է եղել մեր հին գրականության մեջ, և այդ Նորն էլ ծնունդ է Նոր մտավոր հոսանքի» (Աբեղյան, 1970, էջ 85):

Ա. Աբրահամյանը ենթադրաբար գրում է. «Ըստ Վարդանի մի վկայության, Նա «լծակից» է հանդիսացել Հովհաննես Սարկավազ Իմաստասերին, որից և պիտի ենթադրել, որ Նա կա՛մ սովորել է Նրա հետ միասին Հաղպատի վանքում և կա՛մ միասին պաշտոնավարել Անի քաղաքում» (Աբրահամյան, 1952, էջ 49):

Պ. Հովհաննիսյանը «հայ իրավագիտության առաջին աշխարհիկ օրենսդրությունն է» (Հովհաննիսյան, 2012, էջ 675) համարում Դավթի Ալավկա որդու կանոնագիրքը:

Աս. Մնացականյանը Գոշի և Դավթի կանոններն իրավացիորեն համարում է Աղվանից աշխարհի հայության համար ստեղծված. «Տեղական բնիկ հայության այս հոգևոր միջավայրը, բնականաբար, առաջին հերթին, շահագրգռված էր Աղվանից երկրի կարգ ու կանոնով, ինչպես այդ օրերից առաջ՝ Դավթի Ալավկաորդին՝ իր կանոններով, որոնք միաժամանակ Նաև դատաստանագրքային երանգ ու ուղղություն ունեին» (Մնացականյան, 1966, էջ 229-230):

Դավթի Ալավկա որդու ծննդյան տարեթիվը ստույգ հայտնի չէ, Պ. Հովհաննիսյանը ծնված է համարում մոտ 1065 թ. Մեծ Հայքի Ուտիքի Նահանգի հայաշատ Գանձակ քաղաքում:

Պատմիչների վկայությունից պարզվում է, որ Նա ստացել է վարդապետական աստիճան: Դավթի մասին կենսագրական տեղեկություններ չեն պահպանվել:

Ալավկա որդու մահվան տարեթիվը ևս տարածախնության առիթ է եղել, բայց ստույգ է, որ 1140 թվականին Նա այլևս կենդանի չէր: Պ. Հովհաննիսյանը նրա մահվան թվականը համարում է 1138 թ.: Մինչդեռ Կ. Կոստանյանցը գտնում է, որ «Դավթի մասնակից է եղել Գագիկ Բ. կաթողիկոսի ընտրությանն 1138-39 թուերին. հետևաբար Նորա մահը չէր կարող հանդիպել 1140 թուից առաջ, պետք է հավանական հա-

մարվի Վարդանի ցուցումը, թե Սարկավագ Վարդապետի մահը եղել է 1139 (ՇՁԸ) թվին: Ըստ այդմ՝ Դավթի մահը պատահել է Սարկավագ Վարդապետից մի տարի հետո, 1140 թվին» (Կոստանեանց, 1906, էջ 106): Մինչդեռ Սամվել Անեցու ժամանակագրության մեջ նրա մահվան թվականը համարվում է 1131 թիվը, ինչն ընդունել է Ն. Պողարյանը (Պողարեան, 1971, էջ 215), իսկ Կիրակոս Գանձակեցին ու Ստեփաննոս Օրբելյանը՝ 1130 թիվը, ինչպես ընդունել է նաև Կ. Քիպարյանը (Քիպարեան, 1992, էջ 428):

Կ. Կոստանյանը Սարկավագի մահվան թվականի հիման վրա Դավթի Ալավկա որդու մահը դնում է 1140թ., ինչի մասին Հ. Աճառյանը գրում է. «Հաստատում եմ նաև ես այդ թվականը, տեսնելով որ Կիրակոսը (տպ. Վենետ. էջ 101) 1139 թվին դեռ կենդանի է հիշում Դավթին և գործակից Գագիկ-Գրիգորիս կաթողիկոսի ընտրության» (Աճառյան, 1944, էջ 37):

Ս. Աբեղյանը չի ընդունում Սարկավագի՝ 1139 թ. վախճանվելու հանգամանքը և խախտում է համարում Կ. Կոստանյանցի առաջ քաշած թվականը (Աբեղյան, 1970, էջ 447-450):

Ա. Աբրահամյանը պնդում է, որ ճիշտ չէ Սամվել Անեցու հաղորդումը, թե Դավթի Ալավկա որդին մահացել է Սարկավագից մեկ տարի հետո, քանի որ Սարկավագը մահացել է 1129 թ., իսկ Դավթը կենդանի է եղել 1138 թ., երբ միջնորդություն է արել Հայոց կաթողիկոսին՝ Գագիկ եպիսկոպոսին Աղվանից կաթողիկոս կարգելու համար (Աբրահամյան, 1952, էջ 49):

Մեզ համար ընդունելի է Ա. Աբրահամյանի տեսակետը, քանի որ Գրիգոր Գ Պահլավունի (1113-1166) կաթողիկոսը Գագիկ Բ-ին (Գրիգորիս) Աղվանից կաթողիկոս է կարգել 1139 թվին՝ Դավթի Ալավկա որդու խնդրանքով, իսկ Հովհաննես Սարկավագը մահացել է, ոչ թե 1139 թվին, այլ 1130 թվի փետրվարի 11-ին (այս մասին տե՛ս Հովհաննես Սարկավագ, 2017, էջ 9):

Դավթի Ալավկա որդուց մեզ է հասել Կանոնագիրքը, որը կիրառվել է հայոց կյանքում: Այդ կանոնագրքից օգտվել է Մխիթար Գոշն իր «Դատաստանագիրք»-ը գրելիս:

Ն. Պողարյանը գրում է. «Դավթ Վրդ. Գանձակեցի, որդի Ալավկի, իր ժամանակի գիտուն եկեղեցականներեն մին էր, այդ պատճառով իրեն հայրենակից Նորընծայ քահանայ մը, Արքայութիւն Գանձակեցի, իրեն դիմեց կանոնական կարգ մը խնդիրներու մասին լուսաբանու-

թիւներ ստանալու համար. եւ Ալաւկայ որդին գրեց բաւական մանրամասն «Կանոնական Օրենսդրութիւն» մը ի պատասխան Արքայութիւն քահանայի հարցումներուն» (Պողարեան, 1971, էջ 215):

Կանոնագրոյ բնագիրն առաջին անգամ հրատարակել է Ա. Աբրահամյանը 1953թ. (Աբրահամյան, 1953, 48 էջ): Ապա Չարլզ Դաուսերը Ա. Աբրահամյանի կազմած բնագիրը համեմատել է Վենետիկի, Երուսաղէմի, Չմմառի մատենադարաններում պահվող յոթ այլ ձեռագրերի հետ և կազմել սոր բնագիր և այն թարգմանել անգլերէն: Մատենագիրը Հայոց ժողովածուում տպագրվել է սոր քննական բնագիր (Մատենագիրը Հայոց, 2012, էջ 679-723):

Կանոնագիրքն աշխարհաբար է թարգմանել Ռ. Ավագյանը (Ավագյան, 2001, էջ 192-244), որ Մ. Դարբինյան-Մելիքյանի հետ միասին կանոնագիրքը թարգմանել է նաև ռուսերէն (Авакян, 2000, էջ 90-153):

Ի դէպ, մինչև Դավիթ Ալաւկա որդու կանոնագիրքը հայ իրականության մէջ եղել է նաև այլ «Կանոնագիրք Հայոց», որը 8-րդ դարի սկզբներին կազմել է Հայոց կաթողիկոս Հովհաննէս Գ Օձնեցին (717-728): Այն հետագայում լրացվել է և ենթարկվել խմբագրությունների Ժ-ԺԱ դարերում (Մատենագիրք Հայոց, 2012, էջ 727): Եվ այս մասին գիտի նաև Ֆ. Մամեդովան (Мамедова, 2005, էջ 74), սակայն դա չի խանգարել նրան, որ պարզապէս հայտարարի, թէ Դավիթ Ալաւկա որդու կանոնները գրվել են աղվանների համար. «Накануне и в период создания «Судебника» среди албан имели место какие-то отклонения от христианского вероисповедания, «пороки», страшный упадок нравов, о чем свидетельствуют «Житие-мученичество Хосрова Гандзакского» Мхитара Гоша, а также сообщение Давида, сына Алавика Гандзакского (Алавкаворди): «...и прочие пребольшие пороки, которыми заполнили страну Агванскую... разгорелось и распространилось оно среди жителей гор и равнин...» (См.: Эчмиадзин, 1953, с. 44, арм. яз.). Давид Алавкаворди создал каноны, которые должны были искоренить это зло. Таким образом, видно, что еще до Мхитара албанское духовенство было заинтересовано и предпринимало попытки в создании канонов для албанского населения» (Мамедова, 1986, էջ 257-258):

Ավելին՝ Ֆ. Մամեդովան չի բավարարվում միայն Դավիթ Ալաւկա որդուն աղվան համարելով, այլ նրա հետ աղվան է համարում հայ

միջնադարի մեծանուն մատենագիրների. «Именно с этого периода возвышается роль города Гянджи, который становится центром духовной албанской культуры, а также центром мусульманского ренессанса. Этот город дал средневековой христианской культуре таких известных представителей местной албанской историографии, как Давид Алавик, Мхитар Гош, Киракос Гянджинский, Вардан Великий – Аревелци (Восточный) - Албанский, Григор Патмич, Смбат Спарапет, историк Хетум (Хетум Патмич), которые в своих бесценных трудах отразили отдельные аспекты албанского общества, его политической, духовной жизни» (Мамедова, 2005, էջ 70):

Իր գրքում խոսելով Դավիթ Ալավկա որդու և Նրա կանոնների մասին՝ Ֆ. Մամեդովան եզրափակում է ասելիքը. «В заключение следует отметить, что создание «Канонов» Давида Алавика, также как и «Судебника» Гоша, было исторической необходимостью, **потребностью албан иметь свой христианский суд**, пусть церковный в той части исторической Албании, которая находилась под властью мусульманских эмиров, предоставлявших христианам-албанам самим отпращивать свой суд» (Мамедова, 2005, էջ 88):

Ավնիայտ է, որ Ֆ. Մամեդովան իր գրքում չի բերում որևէ ապացույց այն բանի, որ Դավիթ Ալավկա որդին աղվան է և կամ իր կանոնները գրել է աղվանների համար: Նա իր ուսուցչի՝ Չիա Բունիարթովի նման փորձում է հարմարեցնել հայագիտությանը հայտնի փաստերը Նախապես որոշած ծրագրին՝ փորձելով հայ մշակույթի երևելի դեմքերին ներկայացնել որպես աղվանական մշակույթի գործիչներ, ապա աղվանականը յուրացնելով համարել ադրբեջանական, ինչն առավել քան անընդունելի է:

Ավելին՝ Դավիթ Ալավկա որդու կանոններում հանդիպում ենք մի ուշագրավ գլխի «Ժ2. Վասն հայ կնոջն, որ լինի առ քուրդի պատճառս քրիստոնեութեան» վերնագրով, որից ակնհայտ է դառնում, որ կանոնները վերաբերում են հայ մարդկանց, մասնավորապես՝ Դավիթը դատապարտում է հայ կնոջ ամուսնությունը քուրդի հետ, իսկ քահանան իրավունք չունի Նրա երեխային մկրտելու, անգամ մահվան ժամանակ պատարագ մատուցելու. «Հայ կին թէ լինիցի առ քուրդի, գլով քրիստոնեայ եւ ո՛չ մեկնեցի ի նմանէ ի պատճառս քրիստոնեութեան, մի՛ ոք հաղորդեցի նմա ի քահանայից կամ յաշխարհականաց, ի քահա-

Նայից մի՛ առցե գիտատրամադրանքին Նորա եւ մի՛ զմանկունս Նորա ի մկրտութիւն եւ մի՛ հաղորդեսցե ի ժամ մահուան Նորա եւ մի՛ մատուցե պատարագ յետ մահուան և մի՛ առցե տուրս ընծայից Նորա» (Մատենագիրք Հայոց, 2012, էջ 685-686):

Այս մեկ փաստն էլ բավական է պնդելու, որ Դավթի կանոնները վերաբերում են հայ մարդկանց, ինչն առավել ակնհայտ է դառնում հաջորդ գլխում՝ «Վասն կնոջ, որ առ քուրդի Նստի» վերնագրով, որում պարզորոշ ասվում է, որ եթե հայ կինը ապրել է քուրդի հետ, սակայն զոջացել է ու հեռացել, ապա արժան է Նրան կին առնել՝ ներելով Նախորդ անսուրբ կյանքը. «Վասն կնոջ, որ առ քուրդի կացեալ, եթե մահուամբ եթե կենաւ զոջացեալ ի բաց կայցե եւ հայի կին լինիցի, թէ յառաջագոյն աւրինաւորի ուրումն չէր կացեալ կին, եւ եթե միում կացեալ էր, եւ յետ այնորիկ առ քուրդի Նստաւ, առանց աւրինաց ունի, այն պոռնկութիւն է համարեալ: Յետ այնորիկ եթե վարուքն սրբիցե եւ ի սրբութիւն փութասցե, արժան է զնա կին առնել եւ մի՛ խոտեսցեն վասն առաջին անսուրբ կենացն, որով վարեցաւ առ այլազգիսն» (Մատենագիրք Հայոց, 2012, էջ 686):

Ավելին՝ «Վասն գողոյ, որ ըմբռնին եւ ի փայտաքաշին այս է» վերնագրով իսկ գլխում, կրկին հիշատակվում է **հայ** բառը (Մատենագիրք Հայոց, 2012, էջ 695), մինչդեռ Դավթի կանոններում **աղվան** բառը ընդհանրապես չի հանդիպում: Այս փաստերը ևս հիմնավոր ապացույցն են այն բանի, որ Դավթի Ալավկա որդին հայ է և իր կանոնները գրել է հայության համար:

Հարկ է սակայն նշել, որ կանոնների վերջում՝ «Վասն չար առաջնորդաց եւ քահանայից» գլխում, հիշատակվում է, որ տղամարդիկ բազմակնությանմ Աղվանից աշխարհը լցնում են մեծ չարիքներով. «Եւ այլ մեծագոյն չարիս, որով լցին զաշխարհս Աղուանից, քանզի զերեք այրին, եւ չորրորդ այրին, Նա եւ թէ հինգերորդ այրի փոխեալ անխտրելի լինէր Նոցա» (Մատենագիրք Հայոց, 2012, էջ 719): Այս ամենով հանդերձ, Դավթի կանոնները ոչ թե աղվաններին են վերաբերում, ինչի մասին չկա ոչ մի ապացույց, այլ ինչպես վերևում փաստերով հիմնավորեցինք, դրանք հայ մարդկանց կենցաղը կարգավորող Նորմեր են:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Դավթի Ալավկա որդու մասին մատենագրական վկայություններ են թողել Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Ստեփանոս

Օրբեյանը, Մխիթար Այրիվանեցին, Սամվել Անեցին, Ազարիա վարդապետ Սասնեցին:

2. **Դավիթ** բառը թեև ունի եբրայական ծագում, սակայն հին հայկական անձնանուն է (Աճառյան, 1944, էջ 22-23), որի փառաքչական ձևերն են **Դավթակը, Դավթիկը, Դավթունկը**: Պատահական չէ, որ հայկական ազգային էպոսի գլխավոր կերպարի անունը Սասունցի Դավիթ է:

3. Ինչպես անունը, այնպես էլ **Ալավկա որդի** մականունը հաստատում են նրա հայկական ծագումը: **Ալավկայ** ձևը **Ալավիկ** բառի գրաբարյան սեռական հոլովածն է (Աճառյան, 1942, էջ 73): Հին հայերենում է, որ հատուկ անուններն ունեն **ա** արտաքին թեքում, ինչպես **Սաթենկայ, Աբրահամայ, Սահակայ** և այլն, այնպես էլ՝ **Ալավկայ**: Իսկ **որդի** բառը բնիկ հայերեն բառ է (Աճառյան, 1926, էջ 576), որ նշանակում է նաև **արու զավակ, երեխա, ձագ, զարմ** և այլն (Մալխասեանց, 1944, էջ 582):

4. Հայոց պատմիչներ Սամվել Անեցու, Ստեփաննոս Օրբեյանի և Կիրակոս Գանձակեցու կողմից Դավիթն անվանվում է «լուսաւորիչ սուրբ վարդապետ»:

5. Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Դավիթ Ալավկա որդու և Թոքակերի որդի Գրիգորի խնդրանքով հայոց Գրիգոր Գ Պահլավունի հայրապետը Աղվանից կաթողիկոս է ձեռնադրել Գագիկ Բ-ին՝ հաշվի առնելով նաև Դավիթ Ալավկա որդու հեղինակավոր կարծիքը:

6. Կիրակոս Գանձակեցուն, Մխիթար Գոշին, Վարդան Արևելցուն յուրացնելու փորձ արած աղոթեջանցի գիտնականները պարզապես լուռ են հայ պատմիչներ Ստեփաննոս Օրբեյանի, Սամվել Անեցու, Մխիթար Այրիվանեցու վկայակոչման մասին, որոնք ևս իրենց գործերում հիշատակել են Դավիթ Ալավկա որդուն:

7. Դավիթ Ալավկա որդու կանոնները վերաբերում են հայ մարդկանց. մի քանի անգամ կանոններում հիշատակվում է **հայ** բառը, մինչդեռ **աղվան** բառը ընդհանրապես չկա:

8. Վերջապես, 1820-ական թվականներից մինչև 1980-ական թվականներ՝ մոտ երկու դար, հայագիտությունը անդրադարձել է Դավիթ Ալավկա որդուն և նրա կանոններին: Երբ հայ հեղինակի մասին դեռևս 19-րդ դարի սկզբից սկսած գրում էին անվանի հայագետները, ինչ իմանային, թե դարեր անց մի աղոթեջանցի Ֆարիդա Մամեդովա առանց որևէ գիտական հիմքի Դավիթ Ալավկա որդուն անվանելու է աղվան,

իսկ աղվանականը յուրացնելով համարելու է ադրբեջանական, ինչն առավել անընդունելի է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբեղյան Մ., Երկեր, հտ. Դ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 634 էջ:

Աբրահամյան Ա., Դավիթ Ալավկա որդու կանոնները // Էջմիածին ամսագիր, 1952, թ. 9-10, էջ 48-57:

Աբրահամյան Ա., Դավիթ Ալավկա որդու կանոնները, Երևան, Ա. հ., 1953, 47 էջ:

Ալիշան Ղ., Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, Տպարան Ս. Ղազար, 1910, 557 էջ:

Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, Երևան, Պետական համալսարանի հրատարակչություն, 1942, 634 էջ:

Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, Երևան, Պետական համալսարանի հրատարակչություն, 1944, 682 էջ:

Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հտ. Գ, Երևան, Տպ. համալսարանի ապակետիպ N 10, 1926, 1232 էջ:

Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IXդ.-մ.թ. XIX դ.), Երևան, ՄՆԻ-ԵՄ - XXI դար, 2001, 672 էջ:

Ավագյան Ս., Հայ իրավաբաններ. VII-XXI դդ., Երևան, Չանգակ-97, 2005, 234 էջ:

Դավիթ Ալավկա Որդի, Կանոնագիրը (Կանոնական օրենսդրություն), Երևան, Իրավունք, 2010, 158 էջ:

Դուրեան Ե., Պատմութիւն հայ մատենագրութեան վաղ ժամանակաց մինչեւ մեր օրերն, Կ. Պոլիս, Տպագրութիւն Գ. Պաղտատեան, 1885, 118 էջ:

Զարբհանալեան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ-ԺԳ դար), Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1897, 822 էջ:

Թովմասյան Ա., Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1962, 659 էջ:

Ժամանակագրութիւն **Ստեփաննոսի Օրբելեանի**, Երևան, Մատենադարան, 1942, 46 էջ:

Խաչատրեան Պ., Հայ հին գրականութեան մատենագիտութիւն, Երեւան, «Տիգրան ՄԷԾ» հրատարակչութիւն, 2016, 614 էջ:

Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Վարազ Առաքելյանի**, Երևան, Սովետական գրող, 1982, 352 էջ:

Կոստանեանց Կ., Դավիթ Ալավկա Որդի // «Ազգագրական հանդես», գիրք

XIV, թիվ 2, Թիֆլիս, 1906, էջ 105-132, «Ազգագրական հանդես», գիրք XV, Թիֆլիս, 1907, էջ 62-67:

Հաւաքումն պատմութեան **Վարդանայ Վարդապետի** լուսաբանեալ, Վենետիկ, Ի Սուրբ Ղազար, 1862, 184 էջ:

Յովհաննէս Սարկավագ, Տաղեր և հոգևոր երգեր, աշխատասիրությամբ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վանո Եղիազարյանի**, Երևան, Արմավ հրատարակչություն, 2017, 84 էջ:

Յովհաննիսեան Պ., Դավիթ Ավակա Որդին եւ Նրա կանոնագիրը // Մատենագիրը Հայոց, հտ. Ժ2, Երևան, «Նաիրի» հրատարակչութիւն, 2012, էջ 675-677:

Մալխասեանց Սո., Հայերէն բացատրական բառարան, հտ. 3, Երևան, ՀՍՍՌ պետ. Հրատ., 1944, 614 էջ:

Մատենագիրը Հայոց, հտ. Ժ2, Երևան, «Նաիրի» հրատարակչութիւն, 2012, 1121 էջ:

Մեծին **Վարդանայ** պատմութիւն տիեզերական, Մոսկվա, ի տպարանի Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1861, 217 էջ:

Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեաց **Զ. Պ.**, Ս. Պետերբուրգ, ի տպարանի կայսերական ճեմարանի գիտութեանց, 1867, 84 էջ:

Մնացականյան Աս., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966, 286 էջ:

Յովսէփեան Գ., Յիշատակարանք ծեռագրաց, հտ. Ա, Մնթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1951, 1255 էջ:

Զամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հտ. 3, Երևան, 1984, 1092 էջ:

Պողարեան Ն., Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971, 616 էջ:

Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ **Կարեն Մաթեոսյանի**, Երևան, «Նաիրի», 2014, 504 էջ:

Սամուէլյան Խ., Հին հայ իրավունքի պատմությունը, Երևան, «Խորհրդային Հայաստան» հրատ., 1939, 363 էջ:

Սարգիսեան Բ., Քննադատութիւն Յովհան Մանդակունոյ եւ իւր երկասիրութեան վրայ, Վենետիկ, Ս. Ղազար, 1895, 261 էջ:

Սաֆարյան Գ., Դավիթ Ավակաորդու իրավաքաղաքական հայացքները // Պատմա-բանասիրական հանդես, 1988, թ. 4, էջ 113-122:

Սաֆարյան Գ., Դավիթ Ավակա Որդի, Դրվագներ հայ իրավական մտքի պատմության, Երևան, Իրավունք, 2006, 207 էջ:

Սուքիասյան Ա., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1978, 390 էջ:

Տաշեան Յ., Ցուցակ հայերէն ծեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Կիենսա, Կիենսա, տպ. Մխիթարեան, 1895, 1163 էջ:

Քիչարեան Կ., Պատմութիւնն իայ իին գրականութեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1992, 670 էջ:

Авакян Р., Памятники армянского права, Ереван, ЕФ МНЮИ - 21 ВЕК., 2000, 1019 с.:

Мамедова Ф., Кавказская Албания и албаны, Баку, 2005, 801 с.:

Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании (III и. до и. э.—VIII в. и. э.), Баку, «Элм», 1986, 282 с.:

Dowsett C., The Penitential of David of Ganjak, Louvain, 1961:

Neumann C., Versuch einer Geschichte der armenischen Literatur. Leipzig, 1836:

Somalian Placido Sukias, Quadro della storia letteraria di Armenia, Venezia, 1829, 241 էջ:

REFERENCES

Abexyan M., Erker /Countries/, ht. 4, Yerevan, HSSR GA hrat., 1970, 634 p.

Abrahamyan A., David Alavka vordu kanonnery /The rules of David Alavka's son/ // Egmiadzin amsagir, 1952, t. 9-10, pp. 48-57.

Abrahamyan A., David Alavka vordu kanonnery /The rules of David Alavka's son/, Yerevan, A.h., 1953, 47 p.

Aliwan X., Hin havatq kam hetanosakan kronq hayoc /Ancient faith or pagan religion of Armenians/, Venetik, Tparan S. Xazar, 1910, 557 p.

Acharyan Hr., Hayoc andznanneri bararan /Dictionary of Armenian Personal Names/, ht. A, Yerevan, Petakan hamalsarani hrat., 1942, 634 p.

Acharyan Hr., Hayoc andznanneri bararan /Dictionary of Armenian Personal Names/, ht. B, Yerevan, Petakan hamalsarani hrat., 1944, 682 p.

Acharyan Hr., Hayeren armatakan bararan /Armenian radical dictionary/, ht. G, Yerevan, Tp. Hamalsarani apaketip N 10, 1926, 1232 p.

Avagyan R., Hay iravakan mtqi gandzaran (m. t. a. IX d.- m. t. XIX d.) /Treasury of Armenian legal thought (9th century BC-19th century AD)/, Yerevan, MNII-EM - XXI dar, 2001, 672 p.

Avagyan S., Hay iravabanner. VII-XXI dd. /Armenian lawyers. VII-XXI centuries/, Yerevan, Zangak-97, 2005, 234 p.

David Alavka Vordi, Kanonagirq (Kanonakan orensdrutyun) /Rule Book (Statutory Legislation)/, Yerevan, Iravunq, 2010, 158 p.

Duryan E., Patmutyun hay matenagrutean vax gamanakac minchev mer orem /History of Armenian bibliography from early times to the present day/, K. Polis, Tpagrutyun G. Paxtateyan, 1885, 118 p.

Zarbanalyan Z., Haykakan hin dprutyanyan patmutyun (4-13 dar) /History of the Armenian ancient school (4-13 century)/, Venetik, Mxitaryan tparan, 1897, 822 p.

Tovmasyan A., Hin ev mignadaryan hay qreakan iravunq /Ancient and medieval Armenian criminal law/, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 1962, 659 p.

Gamanakagryun Stepannosi Orbelyani /Chronology of Stepannos Orbelian/, Yerevan, Matenadaran, 1942, 46 p.

Xachatryan P., Hay hin grakanytean matenagitutyun /Bibliography of ancient Armenian literature/, Yerevan, «Tigran Mec» hrat., 2016, 614 p.

Kirakos Gandzakeci, Hayoc patmutyun, targmanutyuny, aragabany ev canotagrutyunnery **Varag Araqelyani**, /Armenian history, translation, foreword and notes by Varag Arakelyan/, Yerevan, Sovetakan grox, 1982, 352 p.

Kostanyan K., David Alavka Vordi /Davit Alavka Son/ // «Azgagrakan handes», girq XIV, tiv 2, Tiflis, 1906, էջ 105-132, «Azgagrakan handes», girq XV, Tiflis, 1907, pp. 62-67.

Havaqumn patmutyan **Vardana Vardapeti** lusabaneal /The collection of history illustrated by Vardana Vardapet/, Venetik, Surb Xazar, 1862, 184 p.

Hovannes Sarkavag, Taxer ev hogevor erger, ashxatasirutyamb banasirakan gitutyunneri doctor, professor **Vano Exiazaryani** /Verses and spiritual songs, Doctor of Philological Sciences, Professor Vano Yeghiazaryan with hard work/, Yerevan, Armav hrat., 2017, 84 p.

Hovhannisyan P., David Alavka Vordin ev nra kanonagiry /David Alavka the Son and his canon/ // Matenagiry Hayoc, ht. 16, Yerevan, «Nairi» hrat., 2012, pp. 675-677.

Malxaseanc St., Hayeren bacatrakan bararan /Armenian explanatory dictionary/, ht. 3, Yerevan, HSSR pet. hrat., 1944, 614 p.

Matenagiry Hayoc /Bibliography of Armenians/, ht. 16, Yerevan, «Nairi» hrat., 2012, 1121 p.

Mecin Varadana patmutyun tiezerakan /Cosmological history of Metsin Vardana/, Moskow, tp. Lazaryan chemarani arevelyan lezvac, 1861, 217 p.

Mxitara Ayriyanecvo Patmtyun gamanakagrakan /Chronological history of Mkhitarai Ayriyanetsvi/, i luyc yncayec Q. P. S. Peterbyrg, tp. Kayserakan chemarani gitutyanc, 1867, 84 p.

Mnacakanyan As., Axvanic awxarhi grakanutyan harceri wurgy /From Aghvan on issues of world literature/, Yerevan, HSSR GA hrat., 1966, 286 p.

Hovsepyan G., Hiwatakarang ceragrac /A handwritten note/, ht. A, Antilias, tp. Katokikosutean hayoc Meci Tann Kilikio, 1951, 1255 p.

Chamchyanc M., Patmutyun Hayoc /History of Armenians/, ht. 3, Yerevan, 1984, 1092 p.

Poxaryan N., Hay groxner /Armenian writers/, Yerusaxem, 1971, 616 p.

Samuel Aneci ev warunakoxner, Wanamakagrutyun /Chronology/, awxatasirutyamb **Karen Matevosyani**, Yerevan, «Nairi», 2014, 504 p.

Samuelyan X., Hin hay iravunqi patmutyuny /History of ancient Armenian law/, Yerevan, «Xorhrdayin Hayastan» hrat., 1939, 363 p.

Sargisyan B., Qnnadatutyun Yovhan Mandakunvo ev yur erkasirutyany vra / Criticism of Yovhan Mandakun and his ambivalence/, Venetik, S. Xazar, 1895, 261 p.

Safaryan G., Davit Alavkavordu iravaqaxaqakan hayacqner /Legal and political views of Davit Alavkaordu/ // Patma-banasirakan handes, 1988, t. 4, pp. 113-122.

Safaryan G., Davit Alavka Vordi, Drvagner hay iravakan mtqi patmutyan / Davit Alavka Ordi, Episodes of the history of Armenian legal thought/, Yerevan, Iravunq, 2006, 207 p.

Suqiasyan A., Kilikiayi haykakan petutyany ev iravunqi patmutyuny, /History of the Armenian State and Law of Cilicia/, Yerevan, EPH hrat., 1978, 390 p.

Tawyan H., Cucak hayeren ceragrac matenadaranin Mxitareanc I Vienna /List of Armenian manuscripts in the library from Mkhitarayan in Vienna/, Vienna, tp. Mxitarean, 1895, 1163 p.

Qiparyan K., Patmutyun hay hin grakanutyany /History of ancient Armenian literature/, Venetik, S. Xazar, 1992, 670 p.

Avagyan R., Pamyatniki armyanskogo prava /Monuments of the Armenian law/, Yerevan, EF MNJI- 21 VEK, 2000, 1019 p.

Mamedova F., Kavkazskaya Albaniya i albanci /Caucasian Albania and Albanians/, Baky, 2005, 801 p.

Mamedova F., Politicheskaya istoria i istoricheskaya geografiya Kavkazskoy Albanii (III i. do n. e.—VIII v. i. e.) /Political history and historical geography of the Caucasian Albania (III and. BC - VIII century. and. e.)/, Baky, «Elm», 1986, 282 p.

Dowsett C., The Penitential of David of Ganyak, Louvain, 1961.

Neumann C., Versuch einer Geschichte der armenischen Literatur. Leipzig, 1836.

Somalian Placido Sukias, Quadro della storia letteraria di Armenia, Venezia, 1829, 241 p.

Վանո Եղիազարյան - Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են հայ հին և միջնադարյան գրականությունը, բնագրագիտությունը՝ գրաբար բնագրերի

փոխադրությամբ, բանագիտությունը, արդիի հայ գրականությունը և գրական քննադատությունը: Տպագրվել են հարյուրից ավելի հոդվածներ, 24 գրքեր: Մի քանի աշխատություններ թարգմանվել և տպագրվել են այլ լեզուներով:
vano.exiazaryan@mail.ru.

Vano Eghiazaryan - Doctor of Philology, Professor. Scientific interests: Ancient and Medieval Armenian literature, Textology,-originality with transfer of Grabar texts, Folkloristics, Modern Armenian literature and Literary criticism. Author of 24 books and over 100 articles.

vano.exiazaryan@mail.ru

Вано Егиазарян - д.филол.н., проф. Сфера научных интересов: древнеармянская и средневековая армянская литература, текстология – с переводом (изложением) древнеармянских (на грабаре) оригиналов, фольклористика, современная армянская литература и литературная критика. Были опубликованы более ста статей, 24 книги (монографии). Некоторые работы переведены и опубликованы на других языках.

vano.exiazaryan@mail.ru.